



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 04(155) «09» ապրիլի 2018թ.**

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
	<b>ԼՂՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
30	«Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 7-Ն որոշումը.....	3
31	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 8-Ն որոշումը.....	8
	<b>ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԼՂՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
32	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 33-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի N 2-Ն որոշումը.....	10
33	««Բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ» Ձև 5 (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի N 3-Ն որոշումը.....	11
	<b>ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>	
34	«Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին կից կոլեգիայի աշխատա-	

	կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության տնօրենի 2012 թվականի հունիսի 15-ի N 83-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի N 29-Ն հրամանը.....	24
	<b>ՀԱՏՈՒՎ ԲԱԺԻՆ</b>	
	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիա տրամադրելու մասին որոշման պատճենը.....	28
	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի կողմից տրամադրված և տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները.....	29
	Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից փետրվար, մարտ ամիսներին տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	31
	ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից փետրվար ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	36
	<b>ՈՒՂՂՈՒՄ</b>	
	«2018 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հունվարի 25-ի թիվ 1-Ն որոշման.....	39

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի մարտի 14-ին  
պետական գրանցման համարը 3031822

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«5» մարտի 2018 թվականի

N 7-Ն

ք. Ստեփանակերտ

**ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «Ժ» կետը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2018 թվականի մարտի 5-ի N 7-Ն որոշման

#### ԿԱՐԳ

### ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) գործունեության մոնիթորինգի տեսակները, դրանց իրականացման կարգը և ժամկետները:

2. Մոնիթորինգն իրականացվում է Լիցենզավորված անձանց գործունեության՝ «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրավական ակտերին, լիցենզիայի պայմաններին համապատասխանության վերահսկման, Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվության հավաստիության, ինչպես նաև սակագների վրա ազդեցություն ունեցող գործոնների գնահատման նպատակով (ծախսեր, ներդրումներ, գնումներ և այլն):

3. Լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի ընթացքում Լիցենզավորված անձի և Հանձնաժողովի փոխհարաբերությունները կարգավորվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, սույն կարգով, լիցենզավորված գործունեության առանձին ուղղությունների մոնիթորինգի կարգերով, այլ իրավական ակտերով:

4. Հանձնաժողովն իրականացնում է՝

1) մոնիթորինգ Հանձնաժողովի գրասենյակում՝ Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվության ուսումնասիրության միջոցով:

2) մոնիթորինգ Լիցենզավորված անձի տարածքում՝ Լիցենզավորված անձի գտնվելու և (կամ) գործունեության վայրում կարճաժամկետ (մինչև հինգ աշխատանքային օր) կամ երկարաժամկետ (մինչև 30 աշխատանքային օր) դիտարկումների իրականացման միջոցով: Երկարաժամկետ դիտարկումները Լիցենզավորված անձի մոտ կարող են իրականացվել ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ:

5. Սույն կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված մոնիթորինգը ներքին ընթացակարգ է և իրականացվում է Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ու տեղեկատվության ուսումնասիրության միջոցով:

6. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված մոնիթորինգի իրականացման նպատակով Հանձնաժողովի նախագահը, իսկ օրենքով սահմանված իրավասության սահմաններում՝ Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը, ընդունում է Լիցենզավորված անձի տարածքում մոնիթորինգ իրականացնելու մասին

հրաման կամ հանձնարարագիր (այսուհետ՝ հրաման կամ հանձնարարագիր), որում նշվում են Հանձնաժողովի անվանումը, մոնիթորինգ իրականացնող անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, Լիցենզավորված անձի լրիվ անվանումը, մոնիթորինգի առարկան, վայրը, նպատակը և մոնիթորինգն ընդգրկող ժամանակահատվածը:

7. Լիցենզավորված անձի տարածքում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ Լիցենզավորված անձը պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) տեղեկացվում է այն սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

8. Առանձին դեպքերում՝ անհրաժեշտությունից ելնելով, սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարճաժամկետ դիտարկումը Լիցենզավորված անձի գրավոր համաձայնությամբ կարող է սկսվել սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետից ավելի կարճ ժամկետում:

9. Լիցենզավորված անձի տարածքում իրականացվող մոնիթորինգը ներառում է՝

1) մոնիթորինգի իրականացման ձևաչափի քննարկում Լիցենզավորված անձի հետ.

2) այցելություն հրամանում կամ հանձնարարագրում նշված տարածքներ.

3) օրենքի և սույն կարգի համաձայն անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ստացում և (կամ) համապատասխան շենքերի, շինությունների, ենթակառուցվածքների ու սարքավորումների ակնադիտական զննություն.

4) ստացված տվյալների որակական ու քանակական վերլուծություն և մոնիթորինգի գործընթացի փաստաթղթավորում:

10. Մոնիթորինգի ընթացքում օրենքով սահմանված կարգով կարող են կատարվել լուսանկարահանում, տեսագրում, ձայնագրում և ստացված լուսանկարները, ձայնագրությունները, տեսագրությունները, կազմված գծագրերը և այլ փաստաթղթերը կցվում են սույն կարգի 15-րդ կետով նախատեսված արձանագրությանը:

11. Լիցենզավորված անձն իրավունք ունի՝

1) ծանոթանալ մոնիթորինգին վերաբերող փաստաթղթերին.

2) մոնիթորինգի ընթացքում դրան մասնակից դարձնել փորձագետների, աուդիտորների և համապատասխան այլ մասնագետների.

3) օրենքով սահմանված կարգով բողոքարկել մոնիթորինգ իրականացնող անձի գործողությունները:

12. Լիցենզավորված անձը պարտավոր է՝

1) մոնիթորինգ իրականացնող անձի պահանջով տրամադրել մոնիթորինգի առարկային առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, տալ բացատրություններ ու պարզաբանումներ.

2) չխաչընդոտել մոնիթորինգի ընթացքին՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ մոնիթորինգ իրականացնող անձանց գործունեության համար:

13. Մոնիթորինգ իրականացնող անձն իրավունք ունի՝

1) անարգել մուտք գործել հրամանում նշված տարածք, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) պահանջել և ստանալ մոնիթորինգի առարկային առնչվող տեղեկատվություն, փաստաթղթեր, էլեկտրոնային շտեմարանների տեղեկատվությանը հասանելիություն, ինչպես նաև գրավոր և բանավոր բացատրություններ, պարզաբանումներ.

3) մոնիթորինգի ընթացքում անհրաժեշտության դեպքում ներգրավել փորձագետների, այլ մասնագետների, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնագետներին՝ վերջինիս համաձայնությամբ:

14. Մոնիթորինգ իրականացնող անձը պարտավոր է՝

1) մոնիթորինգի ընթացքում պահպանել Սրցախի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի, Լիցենզավորված անձի ներքին կանոնակարգերի պահանջները:

2) Լիցենզավորված անձի պաշտոնատար անձանց ծանոթացնել մոնիթորինգին առնչվող իրենց իրավունքներին և պարտականություններին:

3) անաչառ և համակողմանի հավաքագրել ու արձանագրել մոնիթորինգի առարկային առնչվող տեղեկությունները և փաստերը:

4) չխաչընդոտել Լիցենզավորված անձի բնականոն աշխատանքը:

15. Հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետի ավարտից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում մոնիթորինգ իրականացնող անձի (անձանց) կողմից կազմվում է արձանագրություն և պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ուղարկվում Լիցենզավորված անձին:

16. Սույն կարգի 15-րդ կետով նախատեսված արձանագրությունը ներառում է՝

1) մոնիթորինգն իրականացնող մարմնի անվանումը:

2) մոնիթորինգի ենթակա Լիցենզավորված անձի անվանումը:

3) մոնիթորինգն իրականացնելու վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը կամ ժամանակահատվածը:

4) մոնիթորինգն իրականացնող անձի (անձանց) անունը, ազգանունը և պաշտոնը:

5) մոնիթորինգի առարկան:

6) մոնիթորինգի արդյունքները:

7) արձանագրության կազմման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, մոնիթորինգ իրականացրած անձի (անձանց) ստորագրությունը:

17. Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի սահմանած ժամկետում, որը չի կարող գերազանցել երեք աշխատանքային օրը, ստորագրում է արձանագրությունը և ներկայացնում իր մեկնաբանությունները, պարզաբանումները, հիմնավորումները և առարկությունները արձանագրության վերաբերյալ:

18. Մոնիթորինգի արդյունքում Հանձնաժողովն իրավասու է՝

1) Լիցենզավորված անձից պահանջել ներկայացնելու բացահայտված թերությունների վերացման, ինչպես նաև խախտումների կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկ:

2) իրականացված մոնիթորինգի արդյունքները և Լիցենզավորված անձի ներկայացրած առարկությունները, հիմնավորումները և առաջարկությունները հաշվի առնելով՝ բացահայտված թերությունների և խախտումների վերացման, ինչպես նաև դրանց կանխարգելման նպատակով տալ հանձնարարականներ և (կամ) կիրառել «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուժանքները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի մարտի 14-ին  
պետական գրանցման համարը 3031823

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«5» մարտի 2018 թվականի

N 8-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 18-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 14Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 18-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.



1) 1-ին կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) արևային էլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 1 մեգավատտ (ներառյալ) տեղակայված հզորություն:

Սույն ենթակետի պահանջներին բավարարող արևային էլեկտրակայանների համար էլեկտրաէներգիայի վաճառքի սակագին չի սահմանվում, եթե արդեն իսկ տրամադրված՝ այդ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության բոլոր լիցենզիաներով ամրագրված էլեկտրակայանների տեղակայված (տեղակայվող) հզորությունների ընդհանուր գումարը գերազանցում է տասը մեգավատտը.».

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն մեթոդիկայի համաձայն՝ սակագները հաշվարկվում են էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի համար Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) փոքր հիդրոէլեկտրակայանների համար՝ 15 տարվա ընթացքում.

2) հողմային էլեկտրակայանների, արևային էլեկտրակայանների և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանների համար՝ 20 տարվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 21-ին մարտի 2018 թվական  
պետական գրանցման համար 3011825

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 փետրվարի 2018 թվական

N 2-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 33-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է**.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի ««Բանկային գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ԲԳ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» N33-Ն որոշմամբ հաստատված հաշվետվության ձևում և հաշվետվության ձևի լրացման հրահանգի 3-րդ կետում «մասնաճյուղերը» բառից հետո լրացնել «, վարկային կազմակերպությունները» բառերը:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Կ.ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 21-ին մարտի 2018 թվական  
պետական գրանցման համար 3011826

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 փետրվարի 2018 թվական

N 3-Ն

ք.Ստեփանակերտ

**«ԲԱՆԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՁԵՎ 5  
(ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ) ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**


1. Հաստատել «Բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ» Ձև 5 (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հաստատել «Բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ» Ձև 5 (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված N 2-ի:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Կ.ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Հավելված N 1  
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
 վիճակագրության պետական խորհրդի  
 2018 թվականի փետրվարի 27-ի N 3-Ն որոշման



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՑԻՆ  
 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

Ներկայացվում է համաձայն՝ «Պետական վիճակագրության մասին ԼՂՀ օրենքի, ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Պետական վիճակագրական աշխատանքների իրականացման համար վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգի»		
Ներկայացվում է՝	Ներկայացնում են՝	Ներկայացման ժամկետը
ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն	ԼՂՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ առևտրային բանկերի ԼՂՀ տարածքում գործող մասնաճյուղերը, վարկային կազմակերպությունները	Մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը
<b>ՏՐԱՄԱՐԿԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ    ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ</b>		
Ով է ներկայացնում (անվանումը) _____ Հեռախոսահամար _____		<b>ՁԵՎ 5</b> (եռամսյակային)  Հաստատված է ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի փետրվարի 27-ի N 3-Ն որոշմամբ

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
 ԲԱՆԿԻ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

/հազ. դրամ/

Հ/Հ		Հաշվետու ժամանակաշրջան առ 01..... 20 թ.	Նախորդ ամսնակաշրջան առ 01..... 20 թ.
1	<b>Տոկոսային եկամուտներ</b>		
1.1	Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսներ		
1.1.1	Ռեզիդենտ բանկերից		
1.1.2	Ոչ ռեզիդենտ բանկերից		
1.2	ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներից		
1.2.1	Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսներ		
1.2.2	Հետգրման պայմանագրերի գծով		
1.2.3	Ավանդներից		
1.2.4	Այլ տեղաբաշխված միջոցներից		
1.3	Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ		

1.3.1	Ռեզիդենտ բանկերից		
1.3.2	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններում		
1.3.3	Ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններում		
1.4	Տնտեսության տրված վարկեր		
1.4.1	Ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից		
1.4.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.4.3	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից		
1.4.4	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.5	Օվերդրաֆտից, օվերնայթից ստացված տոկոսներ		
1.6	Ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված օվերնայթից ստացված տոկոսներ		
1.7	Վարկային քարտերից ստացված տոկոսներ		
1.8	Աշխատակիցներին տրամադրված միջոցներից		
1.9	Բանկի հետ կապված անձանց տրամադրված միջոցներից		
1.9.1	Ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից		
1.9.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.9.3	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից		
1.9.4	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.10	Պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ, այդ թվում՝ հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերից		
1.10.1	Ռեզիդենտ		
1.10.2	Ոչ ռեզիդենտ		
1.11	Ռեպո		
1.11.1	Ռեզիդենտ		
1.11.2	Ոչ ռեզիդենտ		
1.12	Բանկերի կողմից թողարկված արժեթղթերից ստացված տոկոսներ		
1.12.1	Ռեզիդենտ		
1.12.2	Ոչ ռեզիդենտ		
1.13	Ձեռնարկությունների կողմից թողարկված արժեթղթերից պահված տոկոսներ		
1.13.1	Ռեզիդենտ		
1.13.2	Ոչ ռեզիդենտ		
1.14	Լիզինգից ստացված տոկոսներ		
1.15	Այլ տոկոսային եկամուտներ		
1.16	<b>Ընդամենը տոկոսային եկամուտներ</b> (տող1.1+տող1.2+տող1.3+տող1.4+տող1.5+տող1.6+տող1.7+տող1.8+տող1.9+տող1.10+տող1.11+տող1.12+տող1.13+տող1.14+տող1.15)		
2	<b>Տոկոսային ծախսեր</b>		
2.1	Թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսներ		
2.1.1	Ռեզիդենտ բանկերից		
2.1.2	Ոչ ռեզիդենտ բանկերից		
2.2	Ցպահանջ ավանդների դիմաց վճարված տոկոսներ		
2.2.1	Ռեզիդենտ ձեռնարկությունների ավանդների		
2.2.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց ավանդների		
2.2.3	Ռեզիդենտ հասարակական կազմակերպությունների ավանդների		
2.2.4	Ոչ ռեզիդենտ ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների ավանդների		

2.2.5	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց բանկային հաշիվների ու ավանդների		
2.3	ՀՀ ԿԲ-ից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ , այդ թվում հետգնման պայմանագրերի գծով վճարներ		
2.4	Հետգրման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ		
2.4.1	Ռեզիդենտ		
2.4.2	Ոչ ռեզիդենտ		
2.5	Բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ		
2.5.1	Ռեզիդենտ բանկերից		
2.5.2	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններում		
2.5.3	Ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններում		
2.6	Ներգրավված ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ		
2.6.1	Ռեզիդենտ ձեռնարկությունների ավանդների		
2.6.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց ավանդների		
2.6.3	Ռեզիդենտ հասարակական կազմակերպությունների ավանդների		
2.6.4	Ոչ ռեզիդենտ ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների ավանդների		
2.6.5	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց բանկային հաշիվների ու ավանդների		
2.7	Տոկոսային պարտավորություններ կառավարության նկատմամբ պարտավորությունների դիմաց		
2.7.1	Ծրագրերի իրականացման գրասենյակների հաշիվների դիմաց		
2.7.2	Գանձապետարանից ստացված վարկերի դիմաց		
2.8	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ		
2.9	Օվերդրաֆտի, օվերնայթի դիմաց վճարված տոկոսներ		
2.9.1	Ռեզիդենտ		
2.9.2	Ոչ ռեզիդենտ		
2.10	Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով		
2.11	Լիզինգի դիմաց վճարված տոկոսներ		
2.11.1	Ռեզիդենտ		
2.11.2	Ոչ ռեզիդենտ		
2.12	Տոկոսային ծախսեր ավանդների ապահովման դիմաց		
2.13	Հաշվեգրված, բայց չհավաքագրված չաշխատող ակտիվների տոկոսների գծով		
2.14	Այլ տոկոսային ծախսեր		
2.15	<b>Հնդամենք տոկոսային ծախսեր</b> (տող2.1+տող2.2+տող2.3+տող2.4+տող2.5+տող2.6+տող2.7+տող2.8+տող2.9+տող2.10+տող2.11+տող2.12+տող2.13+տող2.14)		
2.16	<b>Զուտ տոկոսային եկամուտներ</b> (տող1.16-տող2.15)		
3	<b>Ոչ տոկոսային եկամուտներ</b>		
3.1	Ստացված միջնորդավճարներից		
3.2	Երաշխիքներից, հոժարագրերից, ակրեդիտիվներից ստացված եկամուտներ		
3.3	Գանձապետարանի սպասարկումից ստացված եկամուտներ		
3.4	Ֆորվարդային, ֆյուչերսային, օպցիոններից ստացված		

	զուտ եկամուտներ		
3.4.1	Ռեզիդենտ		
3.4.2	Ոչ ռեզիդենտ		
3.5	Ֆակտորինգից ստացված զուտ եկամուտներ		
3.5.1	Ռեզիդենտ		
3.5.2	Ոչ ռեզիդենտ		
3.6	Ներդրումներից ստացված շահաբաժիններ		
3.7	Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ		
3.8	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ		
3.9	Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն		
3.10	Բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալությունից ստացված վարձավճարներ		
3.11	Հիմնական միջոցների օտարումից ստացված զուտ եկամուտներ		
3.12	Վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ		
3.13	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով և հուշադրամներով գործառնություններից ստացված զուտ եկամուտ		
3.14	Ստացված տույժեր, տուգանքներ		
3.15	Այլ ոչ տոկոսային եկամուտներ		
3.16	<b>Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ</b> (տող3.1+տող3.2+տող3.3+տող3.4+տող3.5+տող3.6+տող3.7+տող3.8+տող3.9+տող3.10+տող3.11+տող3.12+տող3.13+տող3.14+տող3.15)		
4	<b>Ոչ տոկոսային ծախսեր</b>		
4.1	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		
4.2	Գործուղման ծախսեր		
4.3	Կենսաթոշակային, զբաղվածության համար վճարներ		
4.4	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ		
4.5	Ամորտիզացիոն մասհանումներ		
4.6	Բանկի շենքի վարձակալության վճար		
4.7	Շենքի տնտեսական պահպանման ծախսեր		
4.8	Գովազդային, ներկայացուցչական ծախսեր		
4.9	Գրասենյակային և տպագրական ծախսեր		
4.10	Աուդիտային և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր		
4.11	Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր		
4.12	Համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր		
4.13	Տրանսպորտային ծախսեր		
4.14	Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր		
4.15	Վճարված տույժեր,տուգանքներ		
4.16	Ուսուցման ծախսեր		
4.17	Վճարված միջնորդավճարներ		
4.18	Ապահովագրության գծով ծախսեր		
4.19	Այլ ոչ տոկոսային ծախսեր		
4.20	<b>Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր</b> (տող4.1+տող4.2+տող4.3+տող4.4+տող4.5+տող4.6+տող4.7+տող4.8+տող4.9+տող4.10+տող4.11+տող4.12+տող4.13+տող4.14+տող4.15+ տող4.16+տող4.17+տող4.18+տող4.19)		
4.21	<b>Չուտ ոչ տոկոսային եկամուտներ</b> (տող3.16-տող4.20)		
5	<b>Հասկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին</b>		
5.1	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին		

5.2	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին		
5.3	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին		
5.4	<b>Ընդամենը հատկացումներ</b> (տող5.1+տող5.2+տող5.3)		
6	<b>Դուրս գրված ակտիվների վերադարձ</b>		
6.1	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից		
6.2	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից		
6.3	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստից		
6.4	<b>Ընդամենը վերադարձ</b> (տող6.1+տող6.2+տող6.3)		
6.5	<b>Զուտ մասհանումներ</b> (տող5.4-տող6.4)		
6.6	<b>Շահույթ մինչև հարկվելը</b> (տող2.16+տող4.21-տող6.5)		
6.7	<b>Շահութահարկ</b>		
6.8	<b>Զուտ շահույթ</b> (տող6.6-տող6.7)		
6.9	<b>Հաշվարկված շահաբաժիններ այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով սովորական բաժնետոմսերի գծով</b>		
6.10	<b>Զբաղիված շահույթ</b>		

Ղեկավար՝ \_\_\_\_\_  
(ազգանուն, անուն)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ  
Գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_  
(ազգանուն, անուն)

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության  
Ազգային վիճակագրական ծառայության  
աշխատակազմի ղեկավար՝

Լ. Հարությունյան



**«ԲԱՆԿԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՁԵՎ 5 (ԵՌԱՄՍՅԱԿԱՑԻՆ)  
ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն հրահանգը սահմանում է «Բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ» Ձև 5 (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգը:

2. Տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը երաշխավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

3. Հաշվետվությունը ներկայացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը, Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերը, վարկային կազմակերպությունները:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության՝ ըստ հաշվետվությունում նշված ժամկետների և պարբերականության:

5. Պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

6. Վիճակագրական տեղեկությունների ներկայացման հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

**II. ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

7. Հաշվետվությունը կազմված է 6 բաժնից՝ 1. «Տոկոսային եկամուտներ», 2. «Տոկոսային ծախսեր», 3. «Ոչ տոկոսային եկամուտներ», 4. «Ոչ տոկոսային ծախսեր», 5. «Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին», 6. «Դուրս գրված ակտիվների վերադարձ»:

**III. «ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ»**

8. **Տոկոսային եկամուտներ:** Հաշիվների այս խումբը ներկայացնում է ստացված կամ հաշվարկված (ստացվելիք) տոկոսային եկամուտը՝ տոկոսային եկամուտ ապահովող տարբեր ակտիվներից: Հաշվարկված տոկոսն այն եկամուտն է, որը հաշվարկվել է, բայց չի իրացվել հաշվետվության օրվա դրությամբ: Հաշվարկված տոկոսային եկամուտները դեբետազրվում են համապատասխան ակտիվային հաշիվներից հաշվարկված (ստացվելիք) տոկոսներ հաշիվների հետ (տող1.1+տող1.2+ տող1.3+տող1.4+տող1.5+տող1.6+տող1.7+ տող1.8+ տող1.9+ տող1.10+ տող1.11+ տող1.12+ տող1.13+ տող1.14+ տող1.15):

9. «Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսները» տողում (1.1) ցույց է տրվում բանկում թղթակցային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսները: Տող 1.1-ը՝ «Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսները» ներառում է 1.1.1 «Ռեզիդենտ բանկերից» և 1.1.2. «Ոչ ռեզիդենտ բանկերից» տողերը: «Ռեզիդենտ բանկերում

թղթակցային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսներ»- հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերում բանկերի թղթակցային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների հաշվառման համար: «Թղթակցային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում»- այս հաշվում արտացոլվում են ոչ ռեզիդենտ բանկերում առևտրային բանկի թղթակցային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը:

10. «ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսները» տողում (1.2) ցույց է տրվում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում առևտրային բանկի թղթակցային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը: Տող 1.2-ը՝ «ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսները» ներառում է 1.2.1՝ «Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսները», 1.2.2՝ «Հետգրման պայմանագրերի գծով ստացված տոկոսները», 1.2.3՝ «Ավանդներից ստացված տոկոսները» և 1.2.4՝ «Այլ տեղաբաշխված միջոցներից» տողերը:

11. «Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսները» տողում (1.3) ցույց է տրվում տոկոսները ստացված բանկերում, այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից: Տող 1.3-ը՝ «Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսները» ներառում է 1.3.1՝ «Ռեզիդենտ բանկերից», 1.3.2՝ «Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններում», 1.3.3՝ «Ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններում» տողերը:

12. «Տնտեսության տրված վարկերից ստացված տոկոսները» տողում (1.4) ցույց է տրվում բանկի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված տոկոսները: Տող 1.4-ը՝ «Տնտեսության տրված վարկերից ստացված տոկոսները» ներառում է 1.4.1՝ «Ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից», 1.4.2՝ «Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից», 1.4.3՝ «Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից», 1.4.4՝ «Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից» տողերը:

13. «Օվերդրաֆտից, օվերնայթից ստացված տոկոսներ» տողում (1.5) ցույց է տրվում բանկից ստացված օվերդրաֆտների, օվերնայթների և դրանց գծով հաշվեգրված տոկոսները:

14. «Ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված օվերնայթից ստացված տոկոսներ» տողում (1.6) ցույց է տրվում ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված օվերնայթից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

15. «Վարկային քարտերից ստացված տոկոսներ» տողում (1.7) ցույց է տրվում տոկոսներ ստացված վարկային քարտերից:

16. «Աշխատակիցներին տրամադրված միջոցներից» տողում (1.8) ցույց է տրվում բանկի աշխատակիցներին տրամադրված վարկերը, դրանց դիմաց հաշվեգրված տոկոսները:

17. «Բանկի հետ կապված անձանց տրամադրված միջոցներից» տողում (1.9) ցույց է տրվում բանկի հետ կապված անձանց տրամադրված վարկերը, դրանց դիմաց հաշվեգրված տոկոսները: Տող 1.9-ը՝ «Բանկի հետ կապված անձանց տրամադրված միջոցներից» ներառում է 1.9.1՝ «Ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից», 1.9.2՝ «Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից», 1.9.3՝ «Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից», 1.9.4՝ «Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից» տողերը:

18. «Պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ, այդ թվում՝ հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերից» տողում (1.10) ցույց է տրվում պետական տոկոսային (կուպոնային) արժեթղթերից ստացվելիք տոկոսները: Տող 1.10-ը՝ «Պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ, այդ թվում՝ հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերից» ներառում է 1.10.1՝ «Ռեզիդենտ և 1.10.2՝ «Ոչ ռեզիդենտ» տողերը:

19. «Ռեպո» տողում (1.11) ցույց է տրվում բանկերի ռեպո համաձայնագրերից տոկոսային եկամուտները: Տող 1.11-ը՝ «Ռեպո» ներառում է 1.11.1՝ «Ռեզիդենտ» և 1.11.2՝ «Ոչ ռեզիդենտ» տողերը:

20. «Բանկերի կողմից թողարկված արժեթղթերից ստացված տոկոսներ» տողում (1.12) ցույց է տրվում բանկերի կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերից տոկոսները: Տող 1.12-ը՝ «Բանկերի կողմից թողարկված արժեթղթերից ստացված տոկոսներ» ներառում է 1.12.1՝ «Ռեզիդենտ» և 1.12.2՝ «Ոչ ռեզիդենտ» տողերը:

21. «Ձեռնարկությունների կողմից թողարկված արժեթղթերից պահված տոկոսներ» տողում (1.13) ցույց է տրվում ձեռնարկությունների կողմից թողարկված արժեթղթերից պահված տոկոսները: Տող 1.13-ը՝ «Ձեռնարկությունների կողմից թողարկված արժեթղթերից պահված տոկոսներ» ներառում է 1.13.1՝ «Ռեզիդենտ» և 1.13.2՝ «Ոչ ռեզիդենտ» տողերը:

22. «Լիզինգից ստացված տոկոսներ» տողում (1.14) ցույց է տրվում տոկոսները ստացված լիզինգից:

23. «Այլ տոկոսային եկամուտներ» տողում (1.15) ցույց է տրվում բանկի կողմից այնպիսի գործառնությունների դիմաց ստացված տոկոսային եկամուտները, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

#### IV. «ՏՈՎՈՍԱՑԻՆ ԾԱՆՄԵՐ»

24. **Տոկոսային ծախսեր:** Հաշիվների այս խումբը ներկայացնում է բանկի պարտավորությունների համար վճարված կամ հաշվարկված տոկոսային ծախսերը: Հաշվարկված (վճարվելիք) տոկոսն այն ծախսն է, որը հաշվարկվել է, բայց չի վճարվել հաշվետու օրվա դրությամբ: Հաշվարկված տոկոսը կրեդիտագրվում է «Հաշվարկված տոկոսներ» խմբի համապատասխան հաշվի հետ, դեբետագրվում այս խմբի համապատասխան տոկոսային ծախսի հաշվի հետ (տող2.1+ տող2.2+ տող2.3+ տող2.4+ տող2.5+ տող2.6+ տող2.7+ տող2.8+ տող 2.9+ տող2.11+ տող2.12+ տող2.13+ տող2.14):

25. «Թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսները» տողում (2.1) ցույց է տրվում տոկոսային ծախսերը թղթակցային հաշիվների գծով ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից: Տող 2.1-ը՝ «Թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսները» ներառում է 2.1.1՝ «Ռեզիդենտ բանկերից» և 2.1.2. «Ոչ ռեզիդենտ բանկերից» տողերը:

26. «Ցպահանջ ավանդների դիմաց վճարված տոկոսներ» տողում (2.2) ցույց է տրվում այն տոկոսները որոնք վճարված են ցպահանջ ավանդների դիմաց: Տող 2.2-ը՝ «Ցպահանջ ավանդների դիմաց վճարված տոկոսներ» ներառում է 2.2.1՝ «Ռեզիդենտ ձեռնարկությունների ավանդների», 2.2.2՝ «Ռեզիդենտ ֆիզիկական անձանց ավանդների», 2.2.3՝ «Ռեզիդենտ հասարակական կազմակերպությունների ավանդների», 2.2.4՝ «Ոչ ռեզիդենտ ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների ավանդների», 2.2.5՝ «Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց բանկային հաշիվների ու ավանդների» տողերը:

27. «ՀՀ ԿԲ-ից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ, այդ թվում հետգնման պայմանագրերի գծով վճարներ» տողում (2.3) ցույց է տրվում վճարված տոկոսները ներգրավված Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի միջոցների համար:

28. «Հետգրման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ» տողում (2.4) ցույց է տրվում տոկոսային ծախսերը կապված հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց: Տող 2.4-ը՝ «Հետգրման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ» ներառում է 2.4.1՝ «Ռեզիդենտ» և 2.4.2. «Ոչ ռեզիդենտ» տողերը:

29. «Բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ» տողում (2.5) ցույց է տրվում բանկերից և ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսները: Տող 2.5-ը՝ «Բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ»

ներառում է 2.5.1՝ «Ռեզիդենտ բանկերից», 2.5.2 «Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններում» և 2.5.3 «Ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններում» տողերը:

30. «Ներգրավված ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ» տողում (2.6) ցույց է տրվում տոկոսային ծախսերը հաճախորդներից ներգրավված ժամկետային ավանդների դիմաց: Տող 2.6-ը՝ «Ներգրավված ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ» ներառում է 2.6.1՝ «Ռեզիդենտ ձեռնարկությունների ավանդների», 2.6.2՝ «Ռեզիդենտ ֆիզիկական անձանց ավանդների», 2.6.3՝ «Ռեզիդենտ հասարակական կազմակերպությունների ավանդների», 2.6.4՝ «Ոչ ռեզիդենտ ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների ավանդների» և 2.6.5՝ «Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց բանկային հաշիվների ու ավանդների» տողերը:

31. «Տոկոսային պարտավորություններ կառավարության նկատմամբ պարտավորությունների դիմաց» տողում (2.7) ցույց է տրվում տոկոսային ծախսերը կառավարության նկատմամբ պարտավորությունների դիմաց: Տող 2.7-ը՝ «Տոկոսային պարտավորություններ կառավարության նկատմամբ պարտավորությունների դիմաց» ներառում է 2.7.1՝ «Ծրագրերի իրականացման գրասենյակների հաշիվների դիմաց» և 2.7.2՝ «Գանձապետարանից ստացված վարկերի դիմաց» տողերը:

32. «Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ» տողում (2.8) ցույց է տրվում տոկոսները վճարված միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց:

33. «Օվերդրաֆտի, օվերնայթի դիմաց վճարված տոկոսներ» տողում (2.9) ցույց է տրվում բանկի տոկոսային ծախսերը օվերդրաֆտների, օվերնայթների դիմաց: Տող 2.9-ը՝ «Օվերդրաֆտի, օվերնայթի դիմաց վճարված տոկոսներ» ներառում է 2.9.1՝ «Ռեզիդենտ» և 2.9.2՝ «Ոչ ռեզիդենտ» տողերը:

34. «Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով» տողում (2.10) ցույց է տրվում բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գծով վճարվելիք տոկոսները:

35. «Լիզինգի դիմաց վճարված տոկոսներ» տողում (2.11) ցույց է տրվում բանկի տոկոսային ծախսերը լիզինգի դիմաց: Տող 2.11-ը՝ «Լիզինգի դիմաց վճարված տոկոսներ» ներառում է 2.11.1՝ «Ռեզիդենտ» և 2.11.2՝ «Ոչ ռեզիդենտ» տողերը:

36. «Տոկոսային ծախսեր ավանդների ապահովման դիմաց» տողում (2.12) ցույց է տրվում բանկի պարտավորությունները ավանդների ապահովագրության գծով:

37. «Հաշվեգրված, բայց չհավաքագրված չաշխատող ակտիվների տոկոսների գծով» տողում (2.13) ցույց է տրվում բանկի տոկոսային ծախսերը հաշվեգրված, բայց չհավաքագրված չաշխատող ակտիվների տոկոսների գծով:

38. «Այլ տոկոսային ծախսեր» տողում (2.14) ցույց է տրվում բանկի կողմից այնպիսի գործառնությունների դիմաց ստացված տոկոսային ծախսերը, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

39. «Ընդամենը տոկոսային ծախսեր» տողում (2.15) ցույց է տրվում տող 2.1-ից մինչև տող 2.14-ի հանրագումարը:

40. «Զուտ տոկոսային եկամուտներ» տողում (2.16) ցույց է տալիս տող 1.16՝ «Ընդամենը տոկոսային եկամուտներ-ի և տող 2.15՝ «Ընդամենը տոկոսային ծախսեր»-ի տարբերությունը:

## **V. «ՈՉ ՏՈՎՈՍԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ»**

41. «Ստացված միջնորդավճարներից» տողում (3.1) ցույց է տրվում միջնորդավճարներից ստացված եկամուտները:

42. «Երաշխիքներից, հոծարագրերից, ակրեդիտիվներից ստացված եկամուտներ» տողում (3.2) ցույց է տրվում երաշխիքներով, հոծարագրերով, ակրեդիտիվներով հավատարմագրային կառավարման գործունեության ձևով մատուցված ծառայություններից ստացված եկամուտները:

43. «Գանձապետարանի սպասարկումից ստացված եկամուտներ» տողում (3.3) ցույց է տրվում գանձապետարանի սպասարկումից ստացված եկամուտներ:

44. «Ֆորվարդային, ֆյուչերսային, օպցիոններից ստացված զուտ եկամուտներ» տողում (3.4) ցույց է տրվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ֆորվարդային, ֆյուչերսային, օպցիոնների գործառնություններից ստացվելիք գումարները (տող 3.4.1՝ «Ռեզիդենտ»+տող 3.4.2՝ «Ոչ ռեզիդենտ»):

45. «Ֆակտորինգից ստացված զուտ եկամուտներ» տողում (3.5) ցույց է տրվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարները (տող 3.5.1՝ «Ռեզիդենտ»+տող 3.5.2՝ «Ոչ ռեզիդենտ»):

46. «Ներդրումներից ստացված շահաբաժիններ» տողում (3.6) ցույց է տրվում կապակցված (ասոցիացված, համատեղ կամ դուստր) կազմակերպություններում ներդրումներից ստանալիք շահաբաժինները:

47. «Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ» տողում (3.7) ցույց է տրվում արժեթղթերի վաճառքից ստացված օգուտները:

48. «Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ» տողում (3.8) ցույց է տրվում արտարժույթի առք ու վաճառքից ստացված օգուտները:

49. «Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություններ տողում (3.9) ցույց է տրվում արտարժույթի վերագնահատման արդյունքում առաջացած օգուտները:

50. «Բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալությունից ստացված վարձավճարներ» տողում (3.10) ցույց է տրվում հիմնական միջոցների վարձակալությունից ստացված օգուտները:

51. «Հիմնական միջոցների օտարումից ստացված զուտ եկամուտներ» տողում (3.11) ցույց է տրվում հիմնական միջոցների օտարումից ստացված եկամուտները:

52. «Վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ» տողում (3.12) ցույց է տրվում վերագնահատման արդյունքում առաջացած օգուտները:

53. «Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով և հուշադրամներով գործառնություններից ստացված զուտ եկամուտ» տողում (3.13) ցույց է տրվում թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վաճառքից ստացված եկամուտները:

54. «Ստացված տույժեր, տուգանքներ» տողում (3.14) ցույց է տրվում տարբեր տույժերից և տուգանքներից ստացված եկամուտները, որոնք սահմանվում են բանկի կողմից պայմանագրերի դրույթների խախտումների համար, ինչպիսիք են՝ ժամկետային ավանդների ժամկետից շուտ վերադարձը, վարկերի և վարկերի տոկոսների վճարման ուշացումը կամ այլ խախտումներ:

55. «Այլ ոչ տոկոսային եկամուտներ» տողում (3.15) ցույց է տրվում բանկի կողմից այնպիսի գործառնությունների դիմաց ստացված եկամուտները, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

56. «Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ» տողում (3.16) ցույց է տրվում տող 3.1-ից մինչև տող 3.15-ի հանրագումարը:

## **VI. «ՈՉ ՏՈՎՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ»**

57. «Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ» տողում (4.1) ցույց է տրվում բանկի հիմնական և պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձի, պարգևատրումների և լրավճարների, արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումները:

58. «Գործուղման ծախսեր» տողում (4.2) ցույց է տրվում բանկի կողմից կատարված գործուղման ծախսերը:

59. «Կենսաթոշակային, զբաղվածության վճարներ» տողում (4.3) ցույց է տրվում բանկի կողմից կատարված կենսաթոշակային, զբաղվածության մասով վճարումները:

60. «Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ» տողում (4.4) ցույց է տրվում բանկի կողմից բյուջե վճարվելիք այլ հարկերի, տուրքերի, ինչպես նաև բանկի կողմից

որպես հարկային գործակալ իր հաճախորդներին վճարված եկամուտներից պահված առանձին հարկատեսակների հաշվառման համար վճարները:

61. «Ամորտիզացիոն մասհանումներ» տողում (4.5) ցույց է տրվում բանկի հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը:

62. «Բանկի շենքի վարձակալության վճար» տողում (4.6) ցույց է տրվում բանկի շենքի վարձակալության համար վճարները:

63. «Շենքի տնտեսական պահպանման ծախսեր» տողում (4.7) ցույց է տրվում բանկի կողմից կատարված շենքի պահպանման համար ծախսերը:

64. «Գովազդային, ներկայացուցչական ծախսեր» տողում (4.8) ցույց է տրվում բանկի գովազդային, ներկայացուցչության հետ կապված ծախսերը:

65. «Գրասենյակային և տպագրական ծախսեր» տողում (4.9) ցույց է տրվում բանկի գրասենյակային, տպագրության հետ կապված ծախսերը:

66. «Աուդիտային և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր» տողում (4.10) ցույց է տրվում բանկի աուդիտային և այլ խորհրդատվական ծառայությունների գծով կատարված ծախսերը:

67. «Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր» տողում (4.11) ցույց է տրվում բանկի կողմից վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսերը:

68. «Համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր» տողում (4.12) ցույց է տրվում բանկի կողմից համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով կատարված ծախսերը:

69. «Տրանսպորտային ծախսեր» տողում (4.13) ցույց է տրվում բանկի կողմից տրանսպորտի գծով կատարված ծախսերը:

70. «Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր» տողում (4.14) ցույց է տրվում բանկի կողմից օգտագործվող կապի և հաղորդակցական միջոցների համար կատարված ծախսերը:

71. «Վճարված տույժեր, տուգանքներ» տողում (4.15) ցույց է տրվում բանկի վճարած տույժերի և տուգանքների գծով ծախսերը:

72. «Ուսուցման ծախսեր» տողում (4.16) ցույց է տրվում բանկի կողմից անձնակազմի ուսուցման գծով ծախսերը:

73. «Վճարված միջնորդավճարներ» տողում (4.17) ցույց է տրվում բանկի կողմից վճարված միջնորդավճարների գծով ծախսերը:

74. «Ապահովագրության գծով ծախսեր» տողում (4.18) ցույց է տրվում բանկի կողմից ապահովագրության գծով կատարված ծախսերը:

75. «Այլ ոչ տոկոսային ծախսեր» տողում (4.19) ցույց է տրվում բանկի կողմից այնպիսի գործառնությունների դիմաց կատարված ծախսերը, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

76. «Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր» տողում (4.20) ցույց է տրվում տող 4.1-ից մինչև տող 4.19-ի հանրագումարը:

77. «Զուտ ոչ տոկոսային եկամուտներ» տողում (4.21) ցույց է տրվում տող 3.16՝ «Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ-ի և տող 4.20՝ «Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր»-ի տարբերությունը:

## **VII. «ՀՍԿԱՑՈՒՄՆԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԵՐԻՆ»**

78. **Վարկեր ու դեբիտորական պարտքեր** (այսուհետև՝ ակտիվներ) են համարվում վարկերը (այդ թվում՝ օվերդրաֆտ, վարկային քարտեր, բանկերում ներդրված ավանդներ (այդ թվում՝ նաև բանկային ոսկով)), ֆակտորինգի, ֆինանսական վարձակալության (ֆինանսական լիզինգ), բանկային երաշխիքների և ակրեդիտիվների գծով պահանջները, ակտիվային այլ գործառնությունների (բացառությամբ արժեթղթերում ներդրումների) գծով ստացվելիք գումարները և (կամ) երրորդ անձանց նկատմամբ այլ պահանջները:

79. **Ընդհանուր պահուստը** հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով՝ ընդհանուր պահուստին կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվին:

80. **Հատուկ պահուստը** հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով՝ հատուկ պահուստին կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվին:

Յուրաքանչյուր բանկ ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվներ՝ ընդհանուր և հատուկ պահուստների համար:

81. «Ընդամենը հատկացումներ» տողում (5.4) ցույց է տրվում տող 5.1-ից մինչև տող 5.3-ի հանրագումարը:

#### **VIII. «ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ»**

82. «Ընդամենը վերադարձ» տողում (6.4) ցույց է տրվում տող 6.1-ից մինչև տող 6.3-ի հանրագումարը:

83. «Զուտ մասհանումներ» տողում (6.5) ցույց է տրվում տող 5.4՝ «Ընդամենը հատկացումներ»-ի և տող 6.4՝ «Ընդամենը վերադարձ»-ի տարբերությունը:

84. «Շահույթ մինչև հարկվելը» տողում (6.4) ցույց է տրվում «Զուտ տոկոսային եկամուտներ»-ի (տող 2.16) և Զուտ ոչ տոկոսային եկամուտներ»-ի (տող 4.21) գումարը հանած «Զուտ մասհանումներ»-ը (տող 6.5):

**Լեոնային Ղարաբաղի Հանրապետության  
Ազգային վիճակագրական ծառայության  
աշխատակազմի ղեկավար՝**

**Լ. Հարությունյան**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 23-ին մարտի 2018 թվական  
պետական գրանցման համարը 2101827

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

02 մարտի 2018 թվական

N 29-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ԿԻՑ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ  
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 15-Ի  
N 83-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի  
փետրվարի 7-ի N 73-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի և «Իրավական  
ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ  
հոդվածի՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Սահմանել Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների  
պետական ծառայության տնօրենին կից կոլեգիայի աշխատակարգը՝  
համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական  
ծառայության տնօրենի աշխատակազմի իրավաբան, մայոր Ա.  
Գասպարյանին՝ օրենքով սահմանված կարգով ապահովել սույն հրամանի  
ներկայացումը Արցախի Հանրապետության արդարադատության  
նախարարություն՝ պետական գրանցման համար:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարությանն առընթեր փրկարար ծառայության տնօրենի 2012 թվականի  
հունիսի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն  
առընթեր փրկարար ծառայության տնօրենին կից կոլեգիայի աշխատակարգը  
հաստատելու մասին» N83-Ն հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը  
հաջորդող տասներորդ օրը:

**ԳՆԴԱՊԵՏ**

**Կ.ՍԱՐԳՍՅԱՆ**



**Ա Շ Ն Ա Տ Ա Կ Ա Ր Գ**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՎԵՑ ԿՈՒԵԳԻԱՅԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին կից կոլեգիան (այսուհետ՝ Կոլեգիա) խորհրդակցական մարմին է, որը ստեղծվում է Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի հրամանով:

2. Կոլեգիան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է արտակարգ իրավիճակների պետական ծառայության ոլորտը կանոնակարգող օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

**II. ԿՈՒԵԳԻԱՅԻ ԿԱԶՄԸ**

3. Կոլեգիայի նախագահը Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենն է: Կոլեգիայի կազմը հաստատում է Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենը: Կոլեգիայի կազմում կարող են ընդգրկվել Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի տեղակալները, քաղաքացիական պաշտպանության և աղետների հետևանքների վերացման շտաբի պետը, տնօրենի աշխատակազմի ղեկավարը, ծառայության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները, ծառայության ոլորտում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենները, ինչպես նաև իրենց համաձայնությամբ հեղինակություն վայելող ճանաչված գործիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ անձինք:

**III. ԿՈՒԵԳԻԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ**

4. Կոլեգիայի նպատակն է՝

1) օժանդակել ծառայության գործունեության պլանավորման, որոշումների կայացման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին:

2) մշակել և ներկայացնել ծառայության կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

**IV. ԿՈՒԵԳԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

5. Կոլեգիայի խնդիրներն են հանդիսանում՝

1) ծառայության ստորաբաժանումներում փրկարարական ծառայության գործնական իրականացումը:

2) մասնագիտական և բարոյահոգեբանական պատրաստությունը:

3) ծառայության ստորաբաժանումների կարգուկանոնի, կազմակերպվածության, կարգապահության ամրապնդումը:

4) անձնակազմի կյանքի և առողջության պահպանումը, հատուկ սարքավորումների ու տեխնիկայի անխափան շահագործումը:

5) ներկայացուցչական և գործադիր իշխանությունների մարմինների փոխգործունեության ներդաշնակումը (կոորդինացումը), փրկարարական ծառայողների սոցիալ-իրավական պաշտպանությունը:

6) կադրերի ընտրությունը, դաստիարակությունն ու բաշխումը:

7) Արցախի Հանրապետության պետական պարզենների ներկայացնելու կապակցությամբ եզրակացություն տալը.

8) սարքավորումների և տեխնիկայի նոր տեսակների ներդրումը, փրկարարագիտական աշխատանքների ներդրումը.

9) ծառայության տարեկան բյուջետային ծրագրերի պլանավորումը.

10) ծառայության ամենօրյա գործունեության, ինչպես նաև մասնագիտական և մի շարք այլ կարևոր հարցերի վերաբերյալ խնդիրները:

#### **V. ԿՈՒԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

6. Կոլեգիայի նախագահը՝

1) հաստատում է Կոլեգիայի նիստերի օրակարգը.

2) որոշում է նիստերի անցկացման տեղն ու ժամանակը.

3) վարում է Կոլեգիան.

4) տալիս է հանձնարարականներ Կոլեգիայի անդամներին՝ Կոլեգիայի քննարկմանն ներկայացվող զեկույցների, որոշման նախագծերի և այլ նյութերի պատրաստման համար.

5) լսում է Կոլեգիայի կողմից կայացված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս ցուցումներ ու հանձնարարականներ.

6) պարբերաբար տեղեկացնում է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմ ընդունված որոշումների ու դրանց կատարման ընթացքի մասին:

7. Կոլեգիայի անդամն իրավունք ունի՝

1) ներկայացնել հարցեր՝ Կոլեգիայի օրակարգում ընգրկելու համար.

2) Կոլեգիայի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնել բանավոր կամ գրավոր կարծիք.

3) մասնակցել որոշումների կայացման համար քվեարկությանը:

8. Կոլեգիայի անդամը պարտավոր է մասնակցել Կոլեգիայի նիստերին:

9. Կոլեգիայի անդամի լիազորությունները այլ անձի փոխանցվել չեն կարող:

10. Կոլեգիայի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) իր դիմումի համաձայն,

2) անհարգելի պատճառով 3 անգամ անընդմեջ Կոլեգիայի նիստերին չներկայանալու դեպքում:

11. Կոլեգիայի աշխատանքային գործունեության կազմակերպչական-տեխնիկական ապահովումն իրականացնում է Կոլեգիայի քարտուղարը, ով՝

1) ապահովում է Կոլեգիայի աշխատանքը.

2) կազմում է նիստերի օրակարգը, որոշումների նախագծերը, կազմակերպում տեղեկատվական նյութերի և այլ փաստաթղթերի նախապատրաստումը.

3) վարում է Կոլեգիայի նիստերի արձանագրությունը.

4) ապահովում է Կոլեգիայի նիստի արձանագրությունների կամ դրանց քաղվածքների տրամադրումը Կոլեգիայի անդամներին.

5) հսկողություն է սահմանում ընդունված որոշումների կատարման ընթացքի նկատմամբ:

#### **VI. ԿՈՒԵԳԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

12. Կոլեգիայի աշխատանքները ղեկավարում է նրա նախագահը:

13. Կոլեգիայի նախագահը, անձնական նախաձեռնությամբ կամ Կոլեգիայի անդամների մեկ երրորդի առաջարկությամբ, Կոլեգիայի նիստերին կարող է հրավիրել Արցախի Հանրապետության նախարարությունների, զերատեսչությունների, պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներ:

14. Կոլեգիան իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Կոլեգիայի նիստերն անց են կացվում Կոլեգիայի նախագահի կողմից հաստատված օրակարգով: Կոլեգիայի նախագահը որոշում է Կոլեգիայի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը: Կոլեգիայի յուրաքանչյուր անդամ Կոլեգիայի նիստի օրակարգում ընդգրկելու համար կարող է նիստից առնվազն 3 օր առաջ հարց ներկայացնել Կոլեգիայի քարտուղարին:

15. Կոլեգիայի օրակարգում նշվում են՝

1) Կոլեգիայի նիստի անցկացման վայրը, տարեթիվը, ամսաթիվը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը և զեկուցողի անունը, ազգանունը:

16. Կոլեգիայի նիստերի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերող այլ անհրաժեշտ փաստաթղթերը Կոլեգիայի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

17. Կոլեգիայի նիստերը անց են կացվում ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան եռամսյակը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում արտահերթ նիստ կարող է գումարվել Կոլեգիայի նախագահի կամ անդամների պարզ մեծամասնության նախաձեռնությամբ: Կոլեգիայի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է Կոլեգիայի անդամների կեսից ավելին:

18. Կոլեգիայի նիստերին անդամների ներկայությունը պարտադիր է: Կոլեգիայի անդամների լիազորությունները այլ պաշտոնատար անձանց փոխանցվել չեն կարող:

19. Կոլեգիայի նիստերն արձանագրվում են, որը ստորագրվում է նախագահի և քարտուղարի կողմից:

20. Որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

21. Կոլեգիայի նիստերի արձանագրությունները պահվում են ծառայության գործավարություն իրականացնող ստորաբաժանումում:

**Արցախի Հանրապետության արտակարգ  
իրավիճակների պետական ծառայության  
տնօրենի աշխատակազմի ղեկավար,  
փոխգնդապետ**

**Դ. Հակոբյան**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» ապրիլի 2018 թվականի

N 14-Ս

ք. Ստեփանակերտ

**«ՓԵՅՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՂՐՈՒԹԻ ԵՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ՏԱՐԱԾՔՈՒՄ ՌԱԴԻՈՀԱՂՈՂՈՒՄՆԵՐԻ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ  
(ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ) ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ, 44-րդ և 45-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի «Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգը հաստատելու մասին» N14Ն որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. «Փեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Հաղրույթի և Մարտունու շրջանների տարածքում ընդհանուր ուղղվածության ռադիոհաղորդումների էթերային հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզիա՝ յոթ տարի գործողության ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«13» մարտի 2018թ.

N 41

ք.Ստեփանակերտ

**ՆՈՒՇԻԿ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆ  
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 7-րդ մասի պահանջներով ու հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2018թ. մարտի 13-ի N 1 եզրակացությունը և «Նուշիկ» արտադրական կոդաբերատիվի առ 01.03.2018թ. դիմումը

**ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել 2007 թվականի ապրիլի 10-ին «Նուշիկ» արտադրական կոդաբերատիվին տրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի ԲN 000004 լիցենզիան:

2. Նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործողության դադարեցման մասին տեղեկությունների գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

**Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«04» ապրիլի 2018թ.

N 60

ք.Ստեփանակերտ

**ԲՈՒՑՄԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ և 26-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 4-ի N 2 եզրակացությունը ու անհատ ձեռնարկատեր Ստելլա Քամայանի 2018 թվականի մարտի 22-ին ներկայացրած լիցենզիա ստանալու մասին հայտը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Բավարարել անհատ ձեռնարկատեր Ստելլա Քամայան Մուրադիի հայտն ու տրամադրել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ ապահովել սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

**Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ**

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**  
**ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԴԱԴԱՐՆՑՎԱԾ ԵՎ ԿԱՄԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

07.03.2018թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրամա ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
<b>ՏՐԱՄԱԴՐՈՒՄ</b>							
1	«ՏԱՔՄԻ ՆԻԿՈՆԵ ՍՊԸ	SON00595	14.02.2018թ.	մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	
2	ԱԶ Մարատ Պետրոսյան	SON00596	14.02.2018թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	
<b>ԴԱԴԱՐՆՑՈՒՄ</b>							
1	Արթուր Գրիգորիի Մարտիրոսյան (Ֆիզիկական անձ)	SON00537	17.02.2017թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	դադարեցվել է 14.02.2018թ.
2	Գևորգ Ռոբերտի Խաչատրյան (Ֆիզիկական անձ)	SON00524	19.12.2016թ.		ԼՂՀ	անժամկետ	
3	ԱԶ Արթուր Բարսեղյան	SON00423	11.12.2014թ.		ԼՂՀ	անժամկետ	
4	ԱԶ Կարո Յուրիի Պետրոսյան	SON00515	11.11.2016թ.		ԼՂՀ	անժամկետ	
<b>ԿԱՄԵՑՈՒՄ</b>							
1	Արմեն Շաֆերյան Ալեքսեյի (Ֆիզիկական անձ)	SON00464	29.01.2016թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 07.03.2018թ.
2	ԱԶ Ռուդիկ Գասպարյան	SON00255	19.12.2012թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 03.02.2018թ.
3	ԱԶ Պողոս Կարապետյան	SON00262	24.01.2013թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 13.02.2018թ.
4	ԱԶ Ռոբերտ Պետրոսյան	SON00060	15.02.2010թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 16.02.2018թ.
5	ԱԶ Սարգսյան Ռուդիկ	SON00349	11.02.2014թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է

							12.02.2018թ.
6	ԱԶ Իշխան Աբրահամյան	ՏՕՆ00351	28.02.2014թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 01.03.2018թ.
7	ԱԶ Վիտալի Սամսոնյան	ՏՕՆ00430	17.02.2015թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 18.02.2018թ.
8	ԱԶ Հովիկ Ծատրյան	ՏՕՆ00432	17.02.2015թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 18.02.2018թ.
9	Վարդան Հովհաննեսի Առաքելյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00535	16.02.2017թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 17.02.2018թ.
10	ԱԶ Ղարիբ Գրիգորյան	ՏՕՆ00266	7.02.2013թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 08.02.2018թ.

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**  
**ՄԱՐՏ ԱՄՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

05.04.2018թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
<b>ՏՐԱՄԱԴՐՈՒՄ</b>							
1	Գարիկ Եֆրեմի Սարգսյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00597	02.03.2018թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով	ԱՀ	անժամկետ	
2	Նիկոլայ Մադաթի Գաբրիելյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00598	02.03.2018թ.	ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	



3	ԱԶ Հովիկ Առաքելյան	ՏՕՆ00599	02.03.2018թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ
4	ԱԶ Կարեն Լեոնի Բաբայան	ՏՕՆ00600	02.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
5	Մհեր Մաքսիմի Հայրապետյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00601	02.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
6	Մխիթար Ռազմիկի Վերդիյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00602	02.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
7	Էրիկ Էդուարդի Բաղդասարյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00603	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
8	ԱԶ Սամվել Սերգեյի Հայրապետյան	ՏՕՆ00604	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
9	ԱԶ Արմեն Վյաչեսլավի Ղուլյան	ՏՕՆ00605	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
10	Նվեր Կովկազի Ասլանյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00606	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
11	ԱԶ Վիտալի Կարան	ՏՕՆ00607	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
12	Դավիթ Ռաֆայելի Լալայան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00608	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
13	ԱԶ Կամո Մուսայելյան	ՏՕՆ00609	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
14	Մխիթար Մելսիկի Բեգլարյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00610	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
15	ԱԶ Ռադիկ Դանիելյան	ՏՕՆ00611	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ
16	Իգոր Ալեքսեյի Մարգայան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00612	26.03.2018թ.	ԱՀ	անժամկետ	
17	Էդուարդ Գրիգորիի Ադամյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00613	26.03.2018թ.	ԱՀ	անժամկետ	
18	ԱԶ Աշոտ Ալեքսանդրի Հայրապետյան	ՏՕՆ00614	26.03.2018թ.	ԱՀ	անժամկետ	
19	Արտաշես Աշոտի Մելքունյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00615	26.03.2018թ.	ԱՀ	անժամկետ	
20	Լևոն Ահարոնի Համբոյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00616	26.03.2018թ.	ԱՀ	անժամկետ	
21	Արեն Ռոբերտի Սարուխանյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00617	26.03.2018թ.	ԱՀ	անժամկետ	
22	Սասուն Կարենի Աղաջանյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00618	26.03.2018թ.	ԱՀ	անժամկետ	

23	Վահան Լեվոնի Հարությունյան (Ֆիզիկական անձ)	SՕN00619	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	
24	Արսեն Յուրիի Հայրապետյան (Ֆիզիկական անձ)	SՕN00620	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	
25	Յուրի Միքայելի Կաֆիյան (Ֆիզիկական անձ)	SՕN00621	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	
26	ԱԶ Արտյոմ Արմենի Համբարձումյան	SՕN00622	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	
27	ԱԶ Նինա Անդրեյի Մովսեսյան	SՕN00623	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	
28	ԱԶ Մասիս Բորիսի Մակարյան	SՕN00624	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	
<b>ՂԱՂԱՐՅՈՒՄ</b>							
1	ԱԶ Կարեն Աղաբալյան	SՕN00107	14.02.2011թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	դադարեցվել է՝ 02.03.2018թ.
2	ԱԶ Ալբերտ Բաղդասարյան	SՕN00242	26.10.2012թ.		ԱՀ	անժամկետ	
3	Մարտեն Ռաշիդի Վանյան (Ֆիզիկական անձ)	SՕN00492	31.03.2016թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է՝ 26.03.2018թ.
4	ԱԶ Էդուարդ Դանիելյան	SՕN00181	21.03.2012թ.		ԱՀ	անժամկետ	
5	Գրիշա Ռազմիկի Բալայան (Ֆիզիկական անձ)	SՕN00495	27.05.2016թ.		ԱՀ	անժամկետ	
6	«ԼԱՅՔԵ ՍՊԸ	SՕN00341	16.12.2013թ.	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	
<b>ԿԱՍԵՑՈՒՄ</b>							
1	ԱԶ Գեորգի Բալոնյան	SՕN00067	31.03.2010թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցվել է 01.04.2018թ.
2	ԱԶ Կարեն Պետրոսյան	SՕN00281	28.03.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.03.2018թ.
3	ԱԶ Շիրվանյան Գարիկ	SՕN00360	31.03.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 01.04.2018թ.
4	ԱԶ Լորիկ Առստամյան	SՕN00361	31.03.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 01.04.2018թ.
5	ԱԶ Սեյրան Աղաջանյան	SՕN00434	09.03.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 10.03.2018թ.
6	Սերյոժա Արամի Սարգսյան (Ֆիզիկական անձ)	SՕN00484	15.03.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 16.03.2018թ.
7	Էրիկ Զարմիկի Պողոսյան (Ֆիզիկական անձ)	SՕN00486	31.03.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 01.04.2018թ.
8	ԱԶ Դավիթ Կարախանյան	SՕN00493	31.03.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 01.04.2018թ.

9	Գառնիկ Կամոյի Շահրամանյան (Ֆիզիկական անձ)	SՕN00539	17.03.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 18.03.2018թ.
10	ԱԶ Նորայր Վլադիմիրի Միքայելյան	SՕN00540	17.03.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 18.03.2018թ.
11	ԱԶ Մուշեղ Կամոյի Ավանեսյան	SՕN00541	17.03.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 18.03.2018թ.
12	ԱԶ Վիտալի Սամոնյան	SՕN00430	17.02.2015թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 20.03.2018թ.
13	Արտյոմ Ավետիսյան Առստամի (Ֆիզիկական անձ)	SՕN00456	29.01.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 28.03.2018թ.
14	ԱԶ Նորայր Սովետի Աբալյան	SՕN00516	6.12.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 27.03.2018թ.
15	ԱԶ Վարուժան Շմավոնի Հովհաննիսյան	SՕN00530	19.01.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 20.03.2018թ.

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2018 թվականի փետրվար ամսվա համար**

**ԱՀ քաղաքաշինության նախարարություն**

N N	Ֆիզիկական. անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«ԹԻԷՄ ԲԻԼԴ» ՍՊԸ ք. Ստեփ., Վ. Փափագյան 4	90040951	ՇԻ-1010	02.02.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	26.01.2018	
2	«ԷՅ-ՋԻ-ԷՅ» ՍՊԸ ք. Շուշի, փող. Ղազանչեցոց շ. 57/16	90343077	ՇԻ-1011	09.02.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	07.02.2018	
3	«ԲԻԼԴՀԱՈՒՍ ՔՈՐՊՈՐԵՅՇՆ» ՍՊԸ ք. Ստեփ. Հեքիմյան 4/13	90041592	ՇԻ-1012	16.02.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	16.02.2018	
4			ՇԻ-1013	16.02.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	16.02.2018	
5			ՇԻ-1014	16.02.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	16.02.2018	
6	«ՍՈԼԻՆԴ» ՍՊԸ ք. Ստեփ., Ադմ. Իսակով շ. 2Բ, բն 21	90037915	ՇԻ-1015	23.02.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	07.02.2018	

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2018 թվականի փետրվար ամսվա համար**

**ԱՀ քաղաքաշինության նախարարություն**

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգում (եթե կրկնաբարձրված ժամանակահատվածի ավարտումն ամսաթվով)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		Վերականգնում, վերականգնվում, լուրջ ընկճառուցողական դատարկեցում կամ վերականգնում, փոփոխում ամսաթվով
	Անվանումը	ՀՎՀՀ			Միջնորդի անունը	Նոր ստեղծումը		կասեցման ամսին որոշումն կառուցվածքով	Միջնորդի անունը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ԷՆԵՐԳՈ» ԱԿ ք.Ստեփ. Վ.Վաղարշյան 50 բն. 9	90005352	ՔՓՄ-427	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				17.02.2018		
2	«ՊԻՐԱՄԻԴԱ» ՍՊԸ ք. Ստեփ. 1-ին Նագորնայա 2	90021418	ՇԻ-515	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				22.02.2018		
3	«ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊԸ ք. Ստեփ., Ն. Սահյան 13	90031677	ՇԻ-768	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				03.02.2018		
4			ՇԻ-815	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				14.02.2018		
5	«ՃԱՆՇԻՆ» ՓԲԸ ք. Ստեփ. Նաբերեժնայա 2	90016752	ՇԻ-004	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>					21.01.2018	
6	«ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ ք. Ստեփ. Աջափնյա 2	90003442	ՇԻ-260	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>					29.11.2017	

7	«ՇԻՆ-ՔԱՐ» ՍՊԸ ԼՂՀ Մարտունու շրջ., գ. Գիշի	90213761	ՇԻ- 588	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					27.02.2018	
8	«Վերտիկալ» ՍՊԸ ք. Ստեփ. Գ. Հարությունյանի փ., տ. 7	90033166	ՈՏՀ- 854	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>						09.02.2018 (դիմում առ 05.02.2018)
9	«Արմեն Բաբայան» ԱԶ ք. Շուշի, Ն. Դումանի փող. 2, բն. 34	90427146	ՔՓՄ- 544	Քաղաքաշինական փաստաթղթերի վճակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						16.02.2018 (դիմում առ 14.02.2018)
10			ՈՏՀ- 771	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						
11	«Ճանշինվերանորոգում» ՓԲԸ ք. Ստեփ. Բերքաձորի տեղամաս	90013187	ՇԻ- 708	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>						16.02.2018 (դիմում առ 15.02.2018)
12	«Ծովինար Գաբրիելյան» ԱԶ ԼՂՀ, Ասկերանի շրջան, գ. Այգեստան	90753139	ՔՓՄ- 930	Քաղաքաշինական փաստաթղթերի վճակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						23.02.2018 (դիմում առ 21.02.2018)

## ՈՒՂՂՈՒՄ

2018թ. մարտի 6-ի N 03/154/ ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում տեղ է գտել վրիպակ.

ԱՀ արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում ստացած (գրանցման համար՝ 3011818, 19.02.2018թ.) «2018 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի թիվ 1-Ն որոշման 9-րդ հավելվածը կարդալ N 04/155/ ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում:

ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑԸ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ**

Հ/Հ	Ծածկագիրը	Հրապարակման անվանումը	Հրապարակման ձևը	Հրապարակման լեզուն	Թողարկման (հրապարակման) ժամկետը (ամիսը (եռամսյակը) կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)
1	5800-501	Արցախի Հանրապետության նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը (հաշվարկված բժշկական նորմաներով) (ամսական)	օպերատիվ տեղեկատվություն	հայերեն	1
2	3000-501	Առևտրային բանկերի (մասնաճյուղերի) վարկերի և ավանդների վերաբերյալ (ամսական)		-	6
3	3000-301	Առևտրային բանկերի (մասնաճյուղերի) վարկերի և ավանդների վերաբերյալ (ամսական)	մամուլի հաղորդագրություն	-	6
4	5100-501	Տեղեկություններ ԱՀ ժողովրդագրական ցուցանիշների մասին (ամսական)	օպերատիվ տեղեկատվություն	-	10
5	1300-201	Մպառողական գների ինդեքսը Արցախի Հանրապետությունում (ամսական)	վիճակագրական տեղեկագիր	-	-
6	5100-301	Արցախի Հանրապետության հիմնական ժողովրդագրական ցուցանիշների մասին (ամսական)	մամուլի հաղորդագրություն	-	հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12-րդ օրը
7	1300-301	Արցախի Հանրապետության սպառողական գների ինդեքսը (ամսական)	մամուլի հաղորդագրություն	-	13
8	1000-203	ԱՀ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության հիմնական ցուցանիշները (ամսական)	վիճակագրական տեղեկագիր	-	20
9	1000-301	Համառոտ տեղեկատվություն Արցախի Հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության մասին	մամուլի	-	22



Հ/Հ	Ծածկագիրը	Հրատարակման անվանումը	Հրատարակման ձևը	Հրատարակման լեզուն	Թողարկման (հրատարակման) ժամկետը (ամիսը (եռամսյակը) կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)
		(ամսական)	հաղորդագրություն		
10	1000-303	Թեմատիկ հաղորդագրություններ	մամուլի հաղորդագրություն	-	ըստ անհրաժեշտության
11	5100-201	ԱՀ բնակչության թվաքանակը (տարեկան) 2018 թվականի հունվարի 1-ը	վիճակագրական տեղեկագիր	-	ապրիլ
12	1000-401	Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը	տեղեկատվական եռամսյակային զեկույց	հայերեն	45 տարեկանը՝ 90
13	1000-402	Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը	-	ռուսերեն	50 տարեկան՝ 100
14	1000-302	Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիր	մամուլի հաղորդագրություն	հայերեն	«ԱՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցի հրատարակումից հետո մեկշաբաթյա ժամկետում
15	1220-201	Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները (տարեկան)	վիճակագրական տեղեկագիր	-	1-ին եռամսյակ
16	1220-202	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և համախառն բերքը (տարեկան)	-	-	-
17	5100-102	Միգրացիան Արցախի Հանրապետությունում 2017 թվականին	-	-	1-ին եռամսյակ
18	5100-101	Արցախի Հանրապետության ժողովրդագրական ժողովածու, 2018	վիճակագրական	-	2-րդ եռամսյակ

Հ/Հ	Ծածկագիրը	Հրատարակման անվանումը	Հրատարակման ձևը	Հրատարակման լեզուն	Թողարկման (հրատարակման) ժամկետը (ամիսը (եռամսյակը) կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)
			ժողովածու		
19	1100-101	Արցախի Հանրապետության համախառն ներքին արդյունքը 2017 թվականին	-	-	-
20	1210-101	Արցախի Հանրապետության արդյունաբերությունը 2017 թվականին	-	-	-
21	1220-101	Արցախի Հանրապետության գյուղատնտեսությունը 2017 թվականին	-	-	-
22	1230-101	Շինարարությունը Արցախի Հանրապետությունում 2017 թվականին	-	-	-
23	1300-101	Գները և գների ինդեքսները Արցախի Հանրապետությունում 2017 թվականին	-	-	-
24	4100-101	Արցախի Հանրապետության արտաքին առևտուրը 2017 թվականին (ըստ առանձին երկրների ապրանքների արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի և Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգչի 2-նիշ ծածկագրին համապատասխան)	-	-	-
25	4400-101	Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2017 թվականին	-	-	-
26	1000-103	Արցախը թվերով, 2018	-	հայերեն, անգլերեն	-
27	1220-203	2018 թվականի բերքի տակ կատարված ցանքերի համատարած հաշվառման հանրագումարները	վիճակագրական տեղեկագիր	-	3-րդ եռամսյակ
28	2000-101	Արցախի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը 2017 թվականին	-	-	3-րդ եռամսյակ
29	5200-101	Արցախի Հանրապետության սոցիալական վիճակը 2017 թվականին	-	-	-
30	1000-104	2018 թվականի վիճակագրական հրատարակումների համացանկ (տարեկան)	վիճակագրական տեղեկագիր	հայերեն, անգլերեն	սեպտեմբեր
31	1000-201	Պարենային ապահովություն և աղքատություն	-	հայերեն, անգլերեն	4-րդ եռամսյակ

Հ/Հ	Ծածկագիրը	Հրատարակման անվանումը	Հրատարակման ձևը	Հրատարակման լեզուն	Թողարկման (հրատարակման) ժամկետը (ամիսը (եռամսյակը) կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)
32	5900-201	Արցախի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018 (վիճակագրական վերլուծական զեկույց)	վիճակագրական ժողովածու	հայերեն	-
33	5800-101	Արցախի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018	մամուլի հաղորդագրություն	-	-
34	1000-102	Արցախի շրջանները թվերով, 2018	վիճակագրական ժողովածու	հայերեն, ռուսերեն	-
35	5800-301	Արցախի կանայք և տղամարդիկ, 2018	-	հայերեն, անգլերեն	-
36	1000-101	Արցախի վիճակագրական տարեգիրք, 2018	-	հայերեն, ռուսերեն, անգլերեն	-
<i>ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՅԸ ԹԵՄԱՏԻԿ ՆԵՐԿԱՅԱՅՄԱՄԲ</i>					
1	1000-203	ԱՀ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության հիմնական ցուցանիշները (ամսական)	վիճակագրական տեղեկագիր	հայերեն	20
2	1000-301	Համառոտ տեղեկատվություն Արցախի Հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության մասին (ամսական)	մամուլի հաղորդագրություն	-	22
3	1000-303	Թեմատիկ հաղորդագրություններ	մամուլի հաղորդագրություն	-	ըստ անհրաժեշտության
4	1000-401	Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը	տեղեկատվական եռամսյակային զեկույց	-	եռամսյակայինը՝ 45 տարեկանը՝ 90
5	1000-402	Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը	-	ռուսերեն	եռամսյակայինը՝ 50 տարեկանը՝ 100
6	1000-302	Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող	մամուլի	հայերեն	«ԱՀ սոցիալ-

Հ/Հ	Ծածկագիրը	Հրատարակման անվանումը	Հրատարակման ձևը	Հրատարակման լեզուն	Թողարկման (հրատարակման) ժամկետը (ամիսը (եռամսյակը) կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)
		մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիր	հաղորդագրություն		տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցի հրատարակումից հետո մեկշաբաթյա ժամկետում
7	1000-201	2018 թվականի վիճակագրական հրատարակումների համացանկ (տարեկան)	վիճակագրական տեղեկագիր	-	սեպտեմբեր
8	1000-101	Արցախի վիճակագրական տարեգիրք, 2018	վիճակագրական ժողովածու	հայերեն, ռուսերեն, անգլերեն	4-րդ եռամսյակ
9	1000-102	Արցախի շրջանները թվերով, 2018	-	հայերեն, ռուսերեն	-
10	1000-103	Արցախը թվերով, 2018	-	հայերեն, անգլերեն	2-րդ եռամսյակ
11	1000-104	Արցախի կանայք և տղամարդիկ, 2018	-	-	4-րդ եռամսյակ
<b>ՀԱՄԱԽԱՆՆ ԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ</b>					
12	1100-101	Արցախի Հանրապետության համախառն ներքին արդյունքը 2016 թվականին	վիճակագրական ժողովածու	հայերեն	2-րդ եռամսյակ
<b>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</b>					
13	1210-101	Արցախի Հանրապետության արդյունաբերությունը 2017 թվականին	վիճակագրական ժողովածու	հայերեն	2-րդ եռամսյակ
<b>ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ</b>					
14	1220-201	Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները (տարեկան)	վիճակագրական տեղեկագիր	հայերեն	1-ին եռամսյակ

Հ/Հ	Ծածկագիրը	Հրապարակման անվանումը	Հրապարակման ձևը	Հրապարակման լեզուն	Թողարկման (հրապարակման) ժամկետը (ամիսը (եռամսյակը) կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)
15	1220-202	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և համախառն բերքը (տարեկան)	-	-	
16	1220-101	Արցախի Հանրապետության գյուղատնտեսությունը 2017 թվականին	վիճակագրական ժողովածու	-	2-րդ եռամսյակ
17	1220-203	2018 թվականի բերքի տակ կատարված ցանքերի համատարած հաշվառման հանրագումարները	վիճակագրական տեղեկագիր	-	-
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>					
18	1230-101	Շինարարությունը Արցախի Հանրապետությունում 2017 թվականին	վիճակագրական ժողովածու	հայերեն	2-րդ եռամսյակ
<b>ԳՆԵՐ ԵՎ ՄԱԿԱԳՆԵՐ</b>					
19	1300-201	Սպառողական գների ինդեքսը Արցախի Հանրապետությունում (ամսական)	վիճակագրական տեղեկագիր	հայերեն	10
20	1300-301	Արցախի Հանրապետության սպառողական գների ինդեքսը (ամսական)	մամուլի հաղորդագրություն	-	13
21	1300-101	Գները և գների ինդեքսները Արցախի Հանրապետությունում 2017 թվականին	վիճակագրական ժողովածու	-	2-րդ եռամսյակ
<b>ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ</b>					
22	2000-101	Արցախի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը 2017 թվականին	վիճակագրական ժողովածու	հայերեն	3-րդ եռամսյակ
23	3000-501	Առևտրային բանկերի (մասնաճյուղերի) վարկերի և ավանդների վերաբերյալ	օպերատիվ տեղեկատվություն	-	6
24	3000-301	Առևտրային բանկերի (մասնաճյուղերի) վարկերի և ավանդների վերաբերյալ (ամսական)	մամուլի հաղորդագրություն	-	6

Հ/Հ	Ծածկագիրը	Հրապարակման անվանումը	Հրապարակման ձևը	Հրապարակման լեզուն	Թողարկման (հրապարակման) ժամկետը (ամիսը (եռամսյակը) կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)
<b>ՎՃԱՐԱՑԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ</b>					
25	4100-101	Արցախի Հանրապետության արտաքին առևտուրը 2017 թվականին (ըստ առանձին երկրների ապրանքային արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի և Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգչի 2-նիշ ծածկագրին համապատասխան)	վիճակագրական ժողովածու	հայերեն	2-րդ եռամսյակ
26	4400-101	Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2017 թվականին	-	-	-
<b>ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>					
27	5100-501	Տեղեկություններ ԱՀ ժողովրդագրական ցուցանիշների մասին (ամսական)	օպերատիվ տեղեկատվություն	հայերեն	10
28	5100-301	Արցախի Հանրապետության հիմնական ժողովրդագրական ցուցանիշների մասին (ամսական)	մամուլի հաղորդագրություն	-	հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12-րդ օրը
29	5100-201	ԱՀ բնակչության թվաքանակը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ (տարեկան)	վիճակագրական տեղեկագիր	-	ապրիլ
30	5100-102	Միգրացիան Արցախի Հանրապետությունում 2017 թվականին	վիճակագրական ժողովածու	-	1-ին եռամսյակ
31	5100-101	Արցախի Հանրապետության ժողովրդագրական ժողովածու, 2018	վիճակագրական ժողովածու	-	2-րդ եռամսյակ
32	5200-101	Արցախի Հանրապետության սոցիալական վիճակը 2017 թվականին	-	-	3-րդ եռամսյակ
33	5800-501	Արցախի Հանրապետության նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը (հաշվարկված բժշկական նորմաներով) (ամսական)	օպերատիվ տեղեկատվություն	-	1
34	5900-201	Պարենային ապահովություն և աղքատություն	վիճակագրական տեղեկագիր	հայերեն, անգլերեն	4-րդ եռամսյակ

Հ/Հ	Ծածկագիրը	Հրատարակման անվանումը	Հրատարակման ձևը	Հրատարակման լեզուն	Թողարկման (հրատարակման) ժամկետը (ամիսը (եռամսյակը) կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)
35	5800-101	Արցախի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018 (վիճակագրական վերլուծական զեկույց)	վիճակագրական ժողովածու	հայերեն	-
36	5800-301	Արցախի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018	մամուլի հաղորդագրություն	-	-

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային  
վիճակագրական ծառայության աշխատակազմի ղեկավար**

**Լ. Հարությունյան**